ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և մարմնի ղեկավարի կողմից կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2018 թվականի հունվար ամսվա ընթացքում քաղաքացիներից ստացվել է թվով 26 առաջարկություն, դիմում և բողոք, որից 11-ը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից.

Դիմումներն ըստ բնույթի	Ընդամենը	Պատաս-խանվել է	որից			Ծանոթություն
			Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	
Տարաժամկետ վճարման պայմանով տոհմային ե-րինջներ տրամադրելու մասին	10	8			8	2 դիմում ընթացքի մեջ է: 8 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետութ-յունում տավարաբուծության զար-գացման 2007-2015 թվականների ծրագրի շրջանակներում եվրո-պական երկրներից ՀՀ ներկրված տոհմային երինջների բաշխման գործընթացն ավարտվել է, սակայն նրանց դիմումները վերցված են հաշվառման և տավարաբուծության զարգացման նոր ծրագրի հաս-տատման դեպքում՝ երինջների բաշխման հաջնաժողովի կողմից տրված դրական եզրակցության հիման վրա տարաժամկետ վճար-ման պայմանով դիմումատուներին

						կիատկացվեն տոհմային երինջներ: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուներին, որ քննարկման փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետությունում 2018-2022 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է հանրապետության առաջատար տնտեսություններում ներկրված տոհմային երինջներից տեղական վերարտադրության արդյունքում ստացված և աճեցված երինջները տարաժամկետ վճարման պայմանով տրամադրել տնտեսավարող սուբյեկտներին:
Աշխատած տարիների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին	2	2	2			
Հողամասի սեփականաշնորհման վերաբերյալ փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն անշարժ գույքի, այդ թվում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման իրավասություն վերապահված չէ, նման գործառույթ նախարարությունը չի իրականացնում և դիմումատուի կողմից հայցվող փաստաթղթերը նախարարությունում առկա չեն:

Աշխատանքի ընդունելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ոլորտում, այդ թվում նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի թափուր պաշտոններում նշանակվում են մրցութային կարգով, ուստի առաջարկվել է դիմումատուին հետևել «Հանրային ծառայություն» շաբաթաթերթին կամ քաղաքացիական ծառայության ինտերնետային կայքին, որում զետեղվում են հանրապետությունում առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու վերաբերյալ հայտարարություններ: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ նրա դիմումը և ինքնակենսագրությունն ուղարկվել են նախարարության ենթակա

						կազմակերպություններին հնարավորության դեպքում նրան աշխատանքի ընդունելու հարցը քննարկելու նպատակով:
Վառելանյութ և սերմացու հատկացնելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	26	19	3		16	6 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմում ընդունվել է ի գիտություն:
Որից՝ ՀՀ կառավարության աշխատակազմից վերահասցեագրված						
Լոլիկի մթերման գինը վերանայելու և մթերված լոլիկի բերքի դիմաց գումարների վճարումն ապահովելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ շուկայական տնտեսության պայմաններում բերքի իրացման գները ձևավորվում են առաջարկի և պահանջարկի հիման վրա և ՀՀ կառավարությունը գյուղատնտեսական մթերքների, այդ թվում՝ լոլիկի մթերման և իրացման գներ սահմանելու լիազորություններ չունի: Լոլիկի մթերման գինը որոշվում է լոլիկ արտադրող և մթերող մասնավոր տնտեսավարողների փոխադարձ համաձայնությամբ և ամրագրվում է նրանց միջև կնքված բերքի գնման պայմանագրերում: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ գյուղատնտեսական մթերքների իրացման առկա հիմնախնդիրները մեղմելու, պտուղբանջարեղեն, այդ թվում՝ լոլիկ և խաղող մթերող կազմակերպութ-

						յունների կողմից պայմանագրերի հիման վրա մթերված հումքի դիմաց գյուղացիական տնտեսություններին կատարվող վճարումները կարճ ժամկետներում մարելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել, և ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N53 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել և մեկնարկել է՝ գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը, որի շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա տրամադրվող վարկերը նպատակաուղղվելու են բացառապես մթերվող խաղողի և պտուղբանջարեղենի արժեքի վճարմանը: Ծրագրով սահմանվել է, որ մթերող կազմակերպության կողմից բերքի գնումը հավաստող փաստաթուղթը տրամադրելուց հետո ֆինանսական կառույցը տասնօրյա ժամկետում հանձնված բերքի արժեքը փոխանցում է գյուղացիական տնտեսության բանկային հաշվին:
ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կադրային փոփոխություն կա-	1					1 դիմում ընդունվել է ի տնօրինություն:

տարելու մասին						
Անասնապահական ֆերմա հիմնելու նպատակով աջակցություն ցուցաբերելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի N 39 արձանագրության 7-րդ կետով հաստատվել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիրը, որով նախատեսվել է 2017 թվականի երրորդ եռամսյակից սկսած գյուղատնտեսական վարկերի տրամադրում: Վերջինս շարունակվելու է նաև հետագա տարիներին: Վարկերը կտրամադրվեն մինչև 14% տոկոսադրույքով՝3-10 մլն դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով՝ հաշվի առնելով ներդրումների ուղղվածությունը: Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այն հաշվով, որ վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 3%, իսկ համայնքների գյուղացիական տնտեսություններին՝ 5% տոկոսադրույքով: Սուբսիդավորվող վարկերի տրամադրման հայտի ընդունման, քննարկման և վարկի տրամադրման նախապայման է

						հանդիսանում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնն առաջարկում է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն», «Վարկային երաշխավորությունների տրամադրում» և «Վարկավորման տրամադրում» գործիքները, «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ն «Վարկավորում», «Երաշխիքների տրամադրում» և «Լիզինգի տրամադրում» գործիքները, որոնց մասին առավել մանրամասն տեղեկություններ հնարավոր է ստանալ նրանց պաշտոնական կայքէջերից՝ համապատասխանաբար՝ http://smednc.am/amcontent/sme_state_support/ և http://smeinvet.am/-am-services.html հղումներով:
Օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների մեկական օրինակները տրամադրելու մա-	1	1	1			

սին						
Մեղրի արտադրության կազմակերպման նպատակով ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին	1	1			1	2018 թվականի հունվարի 30-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացու մասնակցությամբ քննարկվել են նրա կողմից բարձրացված հարցերը և քաղաքացուն տրվել են պարզաբանումներ:
Հանրապետությունում տուրիզմի խթանման և տնտեսության զարգացման նպատակով անտառային տարածքի վարձակալության հետ կապված հարցերի մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ վարչապետին ուղղված նրա դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2018 թվականի հունվարի 1-ի Աշ/ր/-18 թվակիր գրությամբ դիմումատուին տրվել են պարզաբանումներ: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պատրաստակամ է նրա հետ քննարկելու տուրիզմի զարգացման նպատակով անտառային հողերի վարձակալության հարցը, որի համար նա կարող է զանգահարել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անտառային տնտեսության բաժին՝ 011561290 հեռախոսահամարով:
Հանրապետության թռչնաֆաբրիկաներում հում թռչնաղբից վարակազերծված և հատիկա-	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետության թռչնաֆաբրիկաներում հում թռչնաղբից վարակազերծված և հա-

վորված օրգանական պարարտանյութի հարահոս մեքենայական արտադրություն ներդնելու մասին						տիկավորված օրգանական պարարտանյութի հարահոս մեքենայական արտադրություն ներդնելու վերաբերյալ նրա նախաձեռնությունն ողջունելի է, քանի որ թռչնաղբի վերամշակումը և վարակազերծումը համահունչ է օրգանական գյուղատնտեսության վարման սկզբունքներին և կարող է նպաստել հանրապետությունում օրգանական պարարտանյութի արտադրության զարգացմանը: Կարևորելով գյուղատնտեսության ոլորտում օրգանական պարարտանյութի օգտագործման անհրաժեշտությունը՝ գտնվել է նպատակահարմար պարարտանյութը փորձարկել հանրապետության տարբեր հողակլիմայական պայմաններում տարբեր մշակաբույսերի վրա՝ պարարտանյութի տնտեսական արդյունավետությունն որոշելու և մասնագիտական եզրակացություն կազմելու համար: Փորձերն իրականացնելու նպատակով առաջարկվել է դիմումատուին համապատասխան քանակությամբ պարարտանյութ և դրա կիրառման վերաբերյալ մեթոդաբանությունը տրամադրել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ին, «Երկրագործության գիտական

						կենտրոն» ՊՈԱԿ-ին և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամին:
Արտերկրից ներկրված տոհմային երինջներ հատկացնելու մասին	2	1			1	1 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման 2007-2015 թվականների ծրագրի շրջանակներում եվրոպական երկրներից ՀՀ ներկրված տոհմային երինջների բաշխման գործընթացն ավարտվել է, սակայն նրա դիմումը վերցված է հաշվառման և տավարաբուծության զարգացման նոր ծրագրի հաստատման դեպքում՝ երինջների բաշխման հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա տարաժամկետ վճարման պայմանով դիմումատուին կհատկացվեն տոհմային երինջներ: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ քննարկման փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետությունում 2018-2022 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է հանրապետության առաջատար տնտեսություններում ներկրված տոհմային երինջներից տեղական վերարտադրության արդյունքում ստացված և աճեցված երինջները

						տարաժամկետ վճարման պայմա-նով տրամադրել տնտեսավարող սուբյեկտներին:
Անասնաբուծությամբ զբաղվելու նպատակով վարկ տրամադրելու, վարկի մարման ժամա-նակացույցով սահմանված ժամկետները վերանա-յելու և տույժերն ու տուգանքները հանելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	2					2 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	11	7	1		6	3 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմում ընդունվել է ի գիտություն:

2018 թվականի հունվար ամսվա ընթացքում կատարվել է քաղաքացիների 8 ընդունելություն, այդ թվում 3- ը մարմնի ղեկավարի կողմից

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Տրվել է Դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	Ծանոթություն
ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում որպես համաճարակաբան աշխատանքի ընդունելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի ենթակա կազմակերպություններում համաճարակաբանի թափուր հաստիք առաջանալու դեպքում, նրա խնդրանքը հաշվի կառնվի:
Սերմացուի ձեռքբերման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման 2018 թվականի ծրագրի շրջանակներում նրան կհատկացվի սերմացու:
Խաղողի օրգանական մաքուր կերերի արտադրություն կազմակերպելու ծրագրային առաջարկի մասին	1			1	ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքում ուսումնասիրվել է խաղողի օրգանական մաքուր կերերի արտադրության կազմակերպման հնարավորությունը և առաջարկվել է քաղաքացուն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել ծրագրի իրականացման հիմնավորված հաշվարկը:
Գյուղմթերքի իրացման գործում օժանդակելու մասին	1	1			

Անասնապահությունը զարգացնելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անասնաբուծության ոլորտի զարգացմանն ուղղված 2018 թվականի ծրագրերը և միջոցառումները:
Ընդամենը	8	1		7	
այդ թվում անձամբ մարմնի ղեկավարի կողմից կատարած ընդունելության արդյունքները					
Լավաշի թխման և չրերի պատրաստման հոսքագծերի վերաբերյալ գյուտերի և Մրգաշատ համայնքը փորձացուցադրական տնտեսություն դարձնելու մասին ծրագրի իրականացմանն աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում է միայն նպատակային ծրագրեր իրականացնելու համար, հետևաբար նրան հնարավոր չէ աջակցություն ցուցաբերել, իսկ Մրգաշատ համայնքը փորձացուցադրական տնտեսություն դարձնելու ծրագրային առաջարկն ընդունվում է ի գիտություն:
Մոլախոտերի դեմ նոր պատրաստուկների կիրառմամբ պայքարի ծրագիր մշակելու և իրականացնելու նպատակով՝ ՀՀ ԳՆ ՍԱՊԾ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում իր աշխատատեղը վերականգնելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ նա կարող է ներկայացնել մոլախոտերի դեմ նոր պատրաստուկների կիրառմամբ պայքարի ծրագիր, որը կքննարկվի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում և նպատակահարմարության դեպքում կձեռնարկվեն համապատասխան քայլեր:
«Արենի Վայն» ընկերության կողմից 2015 թվականին մթերված խաղողի դիմաց գումարը	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը բազմիցս դիմել է «Արենի Վայն»

վճարելու մասին					ընկերությանը գյուղացիական տնտեսություններից մթերված խաղողի դիմաց գումարների վճարումն ապահովելու համար: Միաժամանակ խորհուրդ է տրվել քաղաքացուն հարցին լուծում տալու նպատակով դիմել դատարան:
Ընդամենը	3			3	